Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ ***պատվիրատուի*** *և գնահատող հանձնաժողովի* ***գործողությունների*** *(անգործության) և* ***որոշումների*** *բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Նարեկ Դավթյան Էդվարդի Ա/Ձ-ի ընդդեմ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի ղեկավարի 28.10.2025 թվականին ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքապետարանի և ԱՁ Նարեկ Դավթյան Էդվարդի միջև կնքված «Դիլիջանի համայնքապետարանի կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման» թիվ ՀՀ-ՏՄԴՀ-ԷԱՃԾՁԲ-25/10 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 20.01.2026 թվականի թիվ 106-26 ծանուցումը /որոշումը/ անվավեր ճանաչելու, Դիլիջանի համայնքի ղեկավարի 30.01.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 41-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցը բավարարել.

1.1. անվավեր ճանաչել 28.10.2025 թվականին ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքապետարանի և ԱՁ Նարեկ Դավթյան Էդվարդի միջև կնքված «Դիլիջանի համայնքապետարանի կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման» թիվ ՀՀ-ՏՄԴՀ-

ԷԱՀԾԶԲ-25/10 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի ղեկավարի 20.01.2026 թվականի թիվ 106-26 ծանուցումն /որոշումն/:

1.2. անվավեր ճանաչել Դիլիջանի համայնքի ղեկավարի 30.01.2026 թվականի «Նարեկ Դավթյան Էդվարդի» ԱՁ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 41-Ա որոշումը:

2. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքից հօգուտ «Նարեկ Դավթյան Էդվարդի» ԱՁ-ի բռնագանձել 100 000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE3D-666A-455F-9C61 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը: